

ԵՐԿՈՒ ՔԱՆԱՆԱՅ ԵՒ ՍԵՄԻՆԱՐԻԱ.

Մեղուի 13րդ համարում՝ Աստրախանէն ուղղուած մի նամակի մէջ՝ տեղական հանգուցեալ երկու քահանայից համար Բաբայի ջերմանք շուքայ լինել ակնարկուած է որոյ դէմ մեզ անձանօթ մի պարոն կառուցեալ Մարտիրոսեան Թարգմանչի ստորադրութեամբ՝ երկար և պաշտպանողական մի յօդուած է գրել՝ խնդրելով խմբագրութենէս հրատարակել զայն Արարատայ մէջ:

Յիշեալ նամակում աւելի կգոյուէր Սիմէօն քահանայն՝ որ Թեմ. Ատենի անդամութեան և գանձապետութեան պաշտօնը ըստ բաւականին խղճով և երկար ժամանակ վարած է, և տեղական ժողովրդեան սէրը և համակրութիւնը լիովին կվայելէր ինչպէս կրրէ յիշեալ նամակն:

Նոյն նամակն կյաւելու միւսնոյն համարի մէջ Աստրախանայ Արքեպիսկոպիտոս (Թեմական Գրպանոց) համար ևս Մեղուի հրատարակածը հերքելով թէ տակաւին Պայտեր հաստատութեան ոչ ինչ առաջարկուած չէ՝ որ Սեմինարիայի բացման յապաղման համար սորա և նորա վերայ կյարձակի և լին:

Յիշեալ նամակի ընդ դէմ՝ Մեղուի գործածած խիստ և պախարակիչ լեզուն միանգամայն յարձակողական կծու ակնարկութիւնքը հրատարակութեան արժանի չտեսնելով՝ այսքանով միայն կարևոր խմատը քաղցնիք և ամիսօրեայնք ի ծոց ամսագրոյս:

Ի Բ Ա Գ Ո Ւ Ա Յ.

Խաբար-Իսկան Արարատ Ամագրոյ.

Պարզացի Մշակի Թ. 6-ում յօդուած Գ. Ա. ստորագրութեամբ և «Միթէ աւետարանը վնասակար է, վերնագրով՝ որին ստիպուեցայ և ես պատասխանել այսպէս:

Արգոյ Գ. Ա. կարծելով ստույգ, թէ երբ մեր Ա. հաստատութեան հար-

կաւոր չի համարում թարգմանել աւետարանը աշխարհաբար լեզուաւ, այդ նշանակումէ՝ որ կամ Նորին Ա. հաստատութիւնը չէ ցանկանում ազգային լուսաւորութիւնը և կամ աւետարանի հասկանալին վնասակար է համարում: Իսկ ես ասումեմ, որ Ա. հաստատութեան հարկաւոր չէ համարում օտարներից թարգմանուած և խանդարեալ աշխարհաբար լեզուաւ եղած Ս. Գիրքը՝ այն պատճառաւ՝ որ տեսնումէ այդ թարգմանութիւնների մէջ սուրբ Գիրքը աղաւաղուած, «յերբոս», բառի տեղ «+խին ծակէրին», «հէլանոսի», տեղ «Յոյն», «չարաբան-իւսան», տեղ «ամբաստանութիւն», գրած և այլն և այլն, և զանազան տեսակ իւրեանց քմաց և մոլար գաղափարաց յարմար այլայլած, որ միանգամայն ամենեւին չունի այն նշանակութիւնը՝ ինչ որ ունենումէ գրաբանի մէջ: Ա. հաստատութեան էլ, լինելով աւետարանի աշակերտ, պարտական է կատարել աւետարանի հրամանը՝ այն է արգելել այդպիսի աշխատութիւնները՝ որքան հնար է: Պարծեմ՝ արգոյ Գ. Ա. եթէ դու լինէիր ճշմարիտ մի շայ և անկեղծ ազգասէր՝ նոյնը կըխորհէիր և կաշխատէիր առնել այն՝ ինչ որ այժմ մեր շայրապետն է անում:

Չէ, այս չէ նշանակում՝ որ Ա. հաստատութեան չէ ցանկանում լուսաւորութիւն ազգի, այլ այս նշանակումէ՝ որ Նա ազգի յառաջակրթութեան և աւետարանի հրամանին ճիշտ կատարման նախանձախնդիր է: Մեր գրաբան աւետարանը պարզ շարագրութիւն է և աւելի հասկանալի մեր ժողովրդին՝ քան աշխարհա-

բար թարգմանութիւնը որ և իցէ տեղա-  
կան լեզուաւ: Աթէ սուրբ գիրքը թարգ-  
մանուի Արարատեան լեզուաւ, նա  
նոյն նշանակութիւնը կունենայ Պօլսե-  
ցւոց համար՝ ինչ որ ունենումէ գրաբա-  
ռը՝ եթէ Պօլսի լեզուաւ թարգմանուի,  
նա Պովկասեան Հայերի համար ա-  
ւելի հասկանալի կլինի՝ իբրև մի ընտելա-  
ցած լեզու՝ քան այդ թարգմանութիւնը,  
ուրեմն աւելի լաւ է գրաբառը, որովհետև  
նորա մէջ անխախտ պահպումէ մեր կանո-  
նաւորուած լեզուն և հարազատ թարգ-  
մանութիւնը: Մանաւանդ ազգի պար-  
տականութիւն է, ինչպէս հարազատ զա-  
ւակ հայրենեաց, անձնագոհութեամբ սո-  
վորել իւր նախնիքներից աւանդած և  
այժմ միակ միութարուութիւն ֆնացած այդ  
լեզուն: Մեր բուն լեզուն, մեր կանոնա-  
ւորուած ընտիր լեզուն՝ մեր գրաբառ լի-  
զուն է, մեր պարտականութիւնն է նախ և  
առաջ այդ լեզուն սովորել այնքան, որով  
կարողանանք գոնեա սուրբ գիրքը հաս-  
կանալ և ոչ սուրբ գիրքը աղաւաղել մեր  
հեշտասիրութեան և հասկացողութեան  
յարմար:

Մենք տեսնումենք և հազարաւոր վը-  
կաներ կան, որ սուրբ Գիրքը՝ գրաբառ  
լեզուաւ ի բերան գիտէ անգամ ամե-  
նավերջի անգրագէտ Հայն, երբ նա ջեր-  
մեռանդ սրտիւ սիրումէ իւր սուրբ Արօնը  
և Ակեղեցին, երբ նա սովորական կարգաւ  
գանվումէ միշտ Ակեղեցում և լսումէ այն  
տեղ աւետարանի ձայնը, ուստի նա Սուրբ  
Գիրքի ամեն մի խօսքի վերայ կարողանում  
է բաւական առողջ մտածել և դատել:  
Իսկ նա, որ չէ սիրում իւր սուրբ Արօնն,  
Ակեղեցին և աստուածային ուսումն, և իւր

կեանքի մէջ տարին երկու անգամ էլ չի  
գտնուել սուրբ Ակեղեցում, չի լսել սո-  
ցա ձայնը, չի կարգացել Սուրբ Գիրքը,  
ուստի եթէ մեծ համալսարաններում էլ  
աւարտած լինի իւր ուսումն՝ և կամ ինչ  
լեզուաւ որ թարգմանուած լինի այդ  
գիրքը՝ նա չի հասկանալ դորա քաղց-  
րութիւնը և ոչինչ էլ չի կարող մտածել  
դորա մասին: Այժմ կարող ես հարցա-  
նել ինձանից սիրելի ընթերցող, թէ՛  
« եթէ այդպէս է, ի՞նչի համար է այդքան  
մեծ քանակութեամբ ծախվում այդ գիրքը  
աշխարհաբար լեզուաւ,»: Պատասխան, —  
նախ՝ որովհետև շատ էժան է գնահա-  
տուած, և երկրորդ՝ սուրբ գիրք լինելով՝  
ժողովուրդն աւելի սիրով է առնում, ե-  
թէ այդ գնովդ սուրբ աւետարանը՝ գրա-  
բառ լեզուաւ՝ հարազատ թարգմանու-  
թեամբ տպագրուած լինի, նա աւելի  
շատ կծախուի քան այժմ, որ ընդհանուր  
ազգի յայտնի է դորա անհարազատու-  
թիւնը:

Այն եթէ այժմեան թարգմանիչները  
լինէին աւետարանի այն հաւատարիմ  
ծառայները, ինչպէս հիները, ի հարկէ  
մեր Հայրապետն ինչ կարող էր ասել,  
եթէ նա թարգմանուէր ոչ միայն Հայ  
աշխարհաբար լեզուաւ, այլ նաև միլիօն  
լեզուներով: Բայց որովհետև « ի յետին  
ժամանակս եկեցեն զայլք յափշտա-  
կողք, որ ոչ խնայիցեն հօտին,» այժ-  
մեան թարգմանիչները իսկութեամբ կա-  
տարումեն աւետարանի այս խօսքը և կա-  
մնումեն սուրբ գրքով յափշտակել ազ-  
գութիւնը. ուստի մեր Հայրապետն էլ  
իմանալով այս, պարտաւոր է իբրև Հովի-  
քաջ անձնագոհութեամբ՝ զանազան հը-

նարիւք պաշտպանել Յիսուսից ինքեան յանձնուած շօտը:

Միթէ՞ Բիրբիական ընկերութիւնը չբողոքէ, որ շայոց շայրապետն չգիտի ընդունէ այդ առաջարկութիւնը:

Բիրբիական ընկերութիւնը լաւ իմացել է, որ Քրիստոնէութիւնից բողոքականութիւն փոխուող շայերը հասկացել են իւրեանց սխալը, որ իւրեանք արգելուած ծառի պտուղը ուտելով՝ փոխանակ աստուածանալոյ՝ լուսաւորուելոյ, Լուսաւորչական կրօնի և ազգութեան դրախտիցքն զրկուել են, հասկացել են՝ որ Աւրոպական լուսաւորութիւնը բողոքականութեան մէջ չէ, այլ միաբանութեան:

Այժմ հազեւ թէ համոզուած են՝ որ լուսաւորութիւնը ամեն Քրիստոնեայ ազգերի մէջ է, երբ նոցա մէջ տիրումէ սուրբ սէր, երբ նոքա ձեռք ձեռքի բռնած, սիրտ սրտի հետ միացրած աշխատումեն հասանել դէպի լուսաւորութեան դրախտը: Թէ և այս այսպէս է, բայց դեռ նոցա մէջ փայլումէ հպարտութեան նշոյլները, նոքա յանձնառու չլինելով իւրեանց սխալը՝ աշխատումեն մեղաւորացնել հողերականաց ազգի առաջը՝ իբրև պատճառ իւրեանց մոլորութեան: Բիրբիական ընկերութիւնն էլ լաւ իմանալով, որ շայոց Աթոզիկոսն ո՛չ իւրեանց հայրն է և ո՛չ նոքա նորա զաւակները, և նա չէր կարող համաձայն աւետարանի հրամանին՝ ընդունել այդպիսի թարգմանութիւնների թոյլատուութիւնը, ուստի Փարիսեցիական նենդութեամբ՝ խնդրումէ նորանից թոյլատուութիւն, և երբ սպասելի բացասական պատասխանն ստանումէ, սկըսումէ ազգի առաջը դուռը՝ «Ահա տի-

սէր, որ մենք չենք մեղաւոր երբ դէպի բողոքականութիւնը դադարումնք, այլ ձեր հողերականութիւնն է պատճառ»: Բայց մեր Ազգը, դոցա այս կախարդական նենդութիւնները հետզհետէ շատ լաւ հասկացած է, լաւ գիտէ նաև մեր հողերականաց արածները սկզբից մինչև ցայսօր. նա լսելով այդպիսի զրպարտութիւնները՝ աւելի վառուած սիրով կգնահատէ հողերականաց արած դործունէութիւնները և աւելի ամուր սիրով կապուած կսիրէ նոցա:

Մի՞թէ հայ բողոքականները ազգութեամբ հայ, լեզուաւ հայ, միայն նոցա կրօնքն է այլ:

Ա՛յ մի տեղից չէ կարելի ապացուցանել, որ հիմքը կործանուելից յետոյ շենութիւնը մնայ ամբողջ ազգութեան հիմն կրօնն է, հայերը կրօնը փոխելից յետոյ չեն կարող մնալ ազգութեան և լիզուի մէջ: Նոքա անպատճառ պիտի ընդունին և այն ազգութիւնը՝ այն լեզուն՝ որ կրօնի վերայ որ հաստատուած են: Ասակիծայ է, սորա հաստատութեան կարօտութիւն չկայ: Տեսնումնք, որ շայերը, որք, նաև Պարսից բռնակալութիւնից ստիպուած թողել են կրօնը և դարձել են դէպի մահմետականութիւն, նոյն շայերը այժմ Պարսիկը են, նոքա և նոցա ժառանգները ամուսնացած պարսիկ օրիորդների վերայ, ինքեանք և իւրեանց զաւակները պարսից օրէնքով թրփատուած, պարսկական լեզուաւ զարգացած, պարսկական աւանդութեամբ սնուած: Երգե՛ք էլ ինչով մնացին հայ: Աւրեմն մեր Աւարդանը, Ահա՛հանը և ինչ ասանիսելք մարդիկ էին, որ կրօն պահելոյ համար ջրի պէս են

արիւն թափել : Այ մեզ , որ մենք ենք .  
 Աւարդանայ , Ահաճանայ զաւակները :  
 Չգիտեմ այս պարզ ճշմարտութիւն-  
 ներին կհամոզուի պարոն Պ. Ա. թէ Ֆէ-  
 լիէտօններով պիտի ինձ և իմ ծանաչած  
 ճշմարտութիւններիս հալածէ :

ՉԱՀԱՆ ՇԱՀՈՒՆՆԱՆՅ .

է Պ. Բարսի :

ՆՈՒԷՐ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ .

Նոր Ասիականցի բարեպաշտուհի  
 Տիկին Մարիամ Տրապիզոնցեան՝ իւր  
 ստորական և գովելի ջերմեռանդութիւ-  
 նից շարժուած և իմ բերանացի խնդրա-  
 նօք յորդորուած՝ բարեհաճեցաւ նուիրել  
 իմ վանհայրութեան յանձնուած սուրբ  
 Պայտանեան վանքի եկեղեցու համար մի  
 լարագոյր 75 ուրբի արժողութեամբ :  
 — Սոյն բարեպաշտուհի Տիկինը երկու  
 տարի սորանից առաջ նոյնպէս նուիր-  
 րեց նոյն եկեղեցուն մի արծաթի ոսկէզօծ  
 ձեռի խաչ 40 ո. արժողութեամբ , որոյ  
 մասին իւր ժամանակ մատուցի իմ հրա-  
 պարական շնորհակալութիւնը : Արդ  
 ևս հրատարակելով վերոյիշեալ վարա-  
 գոյրի նուիրատուութիւնը ի գիտութիւն  
 Ազգի և ի բարի օրինակ բարեպաշտ ան-  
 ձանց , և կրկին ու կրկին մատուցանելով  
 իմ խորին շնորհակալութիւնը մեծարգոյ  
 և բարեպաշտուհի Տիկին Մարիամ Տրա-  
 պիզոնցեանին , բարեմաղթումեմ Ս. Աոյս  
 Պայտանէից որ լինի բարեխօս առ Տէրն  
 մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս՝ որ Աս  
 ինքն արժանապէս վարձատրէ նորան աստ  
 և ի հանգիստը իմն :

Վանահայր Ս. Պայտանէան վանքի

ՉԱՀԱՆ ՎԱՐՈՒՊԵՏ ԲԱՍՏԱՐԱՆՆԵՆ .

— Մշակի մէջ Պ. Ա. ( գուցէ անուան և  
 ազգանուն ) զխատառերու ստորագրու-  
 թեամբ երկցած յօդուածներն յայտնի  
 են ընթերցողաց :

Ըստ բաւականին հաւատարիմ աղ-  
 բիւրէ հաղորդուած տեղեկութիւնէ կիմա-  
 ցուի՝ զի Պ. Ա.՝ նոյն ինքն Պրիգոր Երթ-  
 րանին է , որ և Մշակի Խմբագիր — հրա-  
 պարակոյն է :

Այլ և այլ անուններով՝ կամ միայն  
 անուան և մականուն զխատառերը՝ ինչ-  
 պէս նաև աստղեր դնելով ի տեղի ստո-  
 րագրութեան՝ կարելի և ներելի է յօ-  
 դուածներ հրատարակել , բաւական է որ  
 յօդուածագիրն երաշխաւորեալ առանձին  
 ստորագրութիւն ունենայ խմբագրութեան  
 մօտ , կամ թէ՛ խմբագրութեան ծանօթ  
 մի անձն լինի : Աւ մեր փնտառքը այս չէ ,  
 և ոչ յօդուածոց իմաստից առհասարակ  
 ունեցած հակասական և բազմաշփոթ  
 գոյնը՝ կամ թէ սոցին ներհակը , այլ սա  
 է՝ թէ՛ որ և իցէ լրագրական թերթի մէջ  
 տպուած ամեն յօդուած և լուր՝ երբ ի  
 ներքոյ առանձին ստորագրութիւն չունի  
 ուղղակի և պարզապէս խմբագիր — հրա-  
 տարակողին խմբագրութեան և ստորա-  
 գրութեան վերագրուելով՝ հարկ չկայ որ  
 նոյն թերթի մէջ ամեն յօդուածոց ներ-  
 քէ առանձին առանձին ստորագրութիւն  
 գնէ խմբագիր — հրատարակողն : Այս  
 խնդիրը այն ժամանակ միայն բացառու-  
 թիւն կվերցնէ՝ երբ հրատարակութիւնն  
 և խմբագրութիւնն մէկէն աւելի անձանցմէ  
 բաղկացեալ ընկերութեան և կամ մի վա-  
 նական միաբանութեան կվերաբերի , և այն